

յամին 720 արդէն իսկ վախճանած էր, ըստ վկայութեան Ստեփանոսի Սինեցւոյ պատմութեան. զի յայսմ ամի կը գնէ զԵպիսկոպոսութիւն յաջորդի նորա, այսինքն է Անանիայ: Ուրեմն կը մնան վերջին երկուքը: Երկրորդին 'ի նպաստ կարելի է համարել յէջ 327 և 332 կրկին տեղերն՝ յորս գովեստիւք կը յիշուի «հաւատոյն արմատ և աղբիւր թարեթանեալն Աստուծաճիւն» այլովք հանդերձ. իսկ Առաջնոյն նպաստող են Քրիստոսի միոյ անձնաւորութեան և երկուց ընթերցանք մասին ըրած որոշ վարդապետութիւնքն 'ի բազում տեղիս, որք քաջ կը միաբանին իմաստասէր վարդապետին գրուածոց մէջ ըրած վարդապետութեան հետ:

Հ. ԲԱՐՍԵՂ ԱՐԳԻՍՏԱՆ

ՃԱՆԱՊԱՐԶՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՆՆ ՄԱՍԻՈ

(Տես էջ 273. Շարունակութիւն և վերջ.)

Թէպէտ ճանապարհնիս խիստ նեղացուցիչ էր և լեռան կողմ սաստիկ զառիվայր, սակայն մենք ամենայն հրազութեամբ կը թռչէինք գէպ 'ի վար՝ քարէ քար ցատքելով, և գրիթէ յանդգնորէն զիմագրուելով 'ի վտանգ կորստեան: Պապա առաջնորդնիս դեռ ևս ճամբայ չելած՝ յորդորեց զիս չոր մնացած զգեստներէս մի քանիսն հանել վրայէս, ըսելով՝ թէ այնպէս աւելի զիւրին կը լինէր էջն, որուն անկարելի էր ընդգիմանալն. իսկ ինքն փութաց օգուտ քաղել տուած խորհրդէն, և իսկոյն առնելով զգեստներս գլխուն վրայ փաթաթեց՝ փոխանակ զլիսանոցին, զոր վարը մուգացել էր:

Իջնելու ժամանակնիս պատահեցան նաև մի քանի վատ զիպուածներ: Մանուկով խաղարկն՝ ձեռն բաւական ընդարձակ դաշտակէ մը անցնելու ժամանակ՝ կորսնցրնելով մարմնոյն հաւասարակշռութիւնը վար գլորեցաւ սահուն մակերևութին վրայ. բարեբաղդաբար դաշտն շատ խոր չըլլալով՝ ամենեւին չմնասուեցաւ: Նոյն տեղէն ոչ ինչ հեռի՝ արագարագ ընթանալու միջոց՝ աջ ոտս ժայռի մը ճեղքին մէջ մտնելով, քիչ մնաց որ ոտս չըլլէր: Իւ մինչդեռ կ'աշխատէի դուրս հանել զայն վտանգաւոր ճեղքին մէջէն, լըսեցի ետեւէս պայրագին բացազանջութիւններ. իսկոյն դարձայ նայելու թէ ինչ բան է, և տեսայ որ Պ. Պոպով արագարագ վազելու միջոց ուղադրութիւն չընելով տեղոյն անձկութեան, ինկեր մնացել էր գրիթէ գամուած հրկու անձամեծ քարանց մէջ և կը ջանայր դուրս ելնել անտի: Վերջապէս նոյն ատուր հինգերորդ ժամուն հասանք նախնիթաց ատուր գիշերելու տեղերինս, ուր արդէն կը սպասէր մեզ կանուխ պատրաստուած թէյն: Զիւնըն տակաւին կը շարունակէր գալ, հովն զգալի կերպով նուազել էր: Թէպէտ և թացութիւնն բոլորովին թափանցել էր մեր զգեստուց մէջ, սակայն

փոխելու ուրիշ չոր զգեստներ չունենալով, հարկ էր անոնցմով գոհ ըլլալ։ Քանի որ դեռ լոյս էր՝ ուզելով հասնիլ յթիւնէն ի Սարգար-Բուլակ, մեր առաջնորդքն նոր և համառոտագոյն ճամբով մը տարին զմեզ, որ շատ աւելի նեղացուցիչ և դժուարին էր քան նախընթաց աւուր ճանապարհը։ Վասն զի ոչ միայն խիստ ոլորտապտոյտ և դառիվայր էր այն, այլ և հարկ էր մի քանի անգամ ձեռն նիստերէ անցնիլ, յորս ոտքերնիս ծնգաչափ կը խրէին։ Պապան առաջարկեց ինձ իւր ձեռքէն բռնել, որ զգալի կերպով կը դիւրացնէր դէշը։ Ես իսկոյն հաւանեցայ անոր խօսքին, տեսնելով որ կօշիկքս բոլորովին պատառտտեալ այլ ևս չէին կարող պաշտպանել սառուցեալ ոտքերս ընդդէմ սրածայր քարանց, որք մերթ ընդ մերթ ոտիցս մէջ մխուռնելով՝ անդադար կը սահեցնէին զիս։

Յիրաւի շատ նեղացուցիչ էր այն սաստիկ զառիվայր քարանց կարկառեւորու վրայէն իջնիլ, ուր յաճախ քարերն ոտիցս ներքեւէն սահելով և դէպ ի վտար գլորելով՝ կը սպառնային մեր յառաջանալու ընկերաց վրայ ինկնիլ։ Վտակէ մը անդին անցնելու միջոցս՝ կախուցեցայ ահազին քարէ մը, որ յանկարծ ջրոյ մէջ թաւալելով քիչ մնաց զիս այլ իւր հետ պիտի տանէր։

Այլ ևս ծածկուել էր արեւը, և գիշերային ցրտամած խաւարն կ'իջնէր երկրիս վրայ։ Իսկ մենք, մենք դեռ ևս կը շարունակէինք վազել նախկին երազութեամբ։ Ե ողբան կը սաստկանայր խաւարն՝ ամէն մի ոտնիփոխ առնելուս՝ սրտիս տրոփումն ևս կարծես միշտ կը կրկնապատկէր։ Քանի անգամ ևս հարցուցի առաջնորդացս, թէ արդեօք չուտով պիտի հասնինք տուն, նոքա միշտ հաստատ կերպով կը պատասխանէին. «Շուտ, շուտ»... Եկած ձիւնն՝ որ մեզի անտանելի կը թուէր՝ յանկարծ փոխուեցաւ ամօրեի տարափներու, որով դժուարութիւնն այլ կրկնապատկեցաւ։ Մինչդեռ համարեան կուրորէն յառաջ կ'երթայինք, շնայելով ոչ սաստիկ երկնատեղաց հեղեղին, ոչ թանձրամած խաւարին՝ որով կարծես բովանդակ աշխարհըս մի սեւաթոյր և միակտուր մարմարիոն էր դարձել, որոյ կողից վրայ մերթ ընդ մերթ կը շողար խիտ առ խիտ ամպոց միջէն ծագելով՝ հեռաւոր աստիկաց աղօտ լոյսն, շնայելով վերջապէս և ոչ ճանապարհին անպատեհ հուծեան՝ քաջալերեալ Քուրդերուն մեքենական կերպով ըսած «Շուտ, շուտ» խրախուսէն, և ահա յանկարծ՝ յետ կիսածամ խաւարագնաց ընթացքի՝ ծանուցին մեզ առաջնորդքն թէ ճանապարհէն մոլորել ենք, և թէ հարկ է որ տեղերնիս անշարժ մնանք մինչև որ լուսանայ։

Այլ Պ. Պոպով բոլորովին դէմ կեցաւ այս առաջարկութեան, ըսելով թէ ուրիշ միջոց չկայ ցրտահարութենէ ազատելու համար, բայց միայն անընդամեն ընթանալ։ Ե թէ կենալու լինիլք, անուշալ է որ կը մեռնիք։ — Այս վերջին խօսքերս շատ մեծ ազդեցութիւն ըրին Պոպայի վրայ. և մենք երկուքս սկսանք միւր ճամբան փնտռել։ Ասկէ վերջը սկսաւ ճանապարհն առ մէն մի քայլ աւելի ևս դժուարանալ. սարսափելի խաւարն այլ՝ որ չէր ներեր նոյն իսկ ամենամեծ առարկաները գտնադանել, սաստիկ նեղութեան և դժուարութեանց մէջ ձգեց զմեզ. իսկ մենք դանդաղորէն և գրեթէ խաթրափելով յառաջ կ'երթայինք, ամէն մէկ քայլին չորս կողմերնիս զննելով։ Եւ ահա յանկարծ մեծ ժայռ մը գիմացնիս ելաւ, որոյ վրայ մագլցելով վեր ելանք. իսկ անոր հետ անմիջապէս կը բացուէր խոր փոս մը, որուն մէջ գլորեցանք չգիտնալով, և մինչև կարող էինք ոտքերնիս խորտակել։ Եւ այսպէս, յետ սակաւ մի ժամանակ փորձելու և զուր տեղ թափառելու, վասնզի ամէն կողմէ բիրաւոր փտանջներ պաշարէին երկ ընդ մեզ, վերջապէս կանգ առաւ Պոպան և ըսաւ, թէ այլ ևս անկարելի է յա-

առջ գնալու իսկ երբ Պ. Պոպով կրկին ընդգրկուցաւ, այն ատեն պատասխանեց նա, թէ Գաւառապետն զիս իրեն յանձնել է, և թէ ինքն է պատասխանատու ամենայն փնտսուց՝ որ պատահին ինձ. և որովհետեւ այնպիսի խաւարի մէջ կարելի է դիւրաւ գլորիլ և փնտսուիլ, անոր համար ինքն այլ ևս կարող չէ յառաջ գնալ, այլ հարկ է սպասել մինչև լուսանայ: Այս բանն իմանալով, սրտանց շատ շնորհակալ եղայ Գաւառապետին իմ վրաս ունեցած խնամոց և հսկողութեան: Ոչ ինչ հեռի այն տեղէն՝ ուր մենք կանգ առել էինք, Քուրդք բաւական մեծութեամբ այր մը գտան, ուր փութացինք պատսպարիլ տեղատարափ անձրևոյն և սաստկացունչ հովուն բռնութենէն: Պ. Պոպով, Մանուկով և հս ներս մտանք, և իսկոյն ընկողմանեցանք գետինը տարածուած զգեստուց վրայ. իսկ այլք տեղւոյն անձկութեան պատճառաւ՝ մէկ կողմը բարանց վրայ տարածուեցան: Անոնց բաղձէն՝ այն ձրևն որ մինչև այրին ներքսագոյն կողմը կը հասնէր, տակաւ առ տակաւ դադրեցաւ, և առ վայր մի սրողեալ լուսինն՝ սրընթաց ամպերուն միջէն սկսաւ դուրս նայիլ:

Թէպէտեւ սաստիկ ծարաւն կը տանջէր զմզ, այլ չէինք կարող չիջնցընել զայն՝ մեր մօտերը բնաւ ջուր չգտնուելով, և չուցելով ամենեին զպչիլ քովերնիս գտնուած շրճին՝ որ լի էր Մասեաց գազաթին ձեռմը: Սակայն ծաւաւէն աւելի կը նեղէր զմզ՝ մեր զգեստուց թացութիւնն. և որպէսզի հարբուիւն չըռնուինք, քովերնիս գտնուած շրճի մէջի ոգեւից հեղուկով ոտքերնիս չփնցինք:

Առաւօտեան գէժ՝ այն ինչ ամպերն սկսան կարմրագունիլ և վարդազոյն ամպիկներն սկսան սուրալ սփռիլ երկնից պայծառ կամարին վրայ, ահա մենք ամէնքս ալ ոտքի վրայ էինք. և առաւօտեան ժամը 6ին, հրք արևուն առաջին ճառագայթներն անցնելով լեռան գոռոզ գագաթին վրայէն մեզի հասան, արդէն իսկ կը գտնուէինք մեր ընկերաց մէջ, որք սաստիկ վախցեր էին մեզի համար, տեսնելով նախընթաց երեկոյն թէ ինչպէս գոռոզ հսկայն (Մասիս) խիտ խիտ ամպոց սև քողով պատել էր իւր գլուխն:

ԵԼԻԻ ՓՈՔՐՆ ՄԱՍԻՍ՝ Պ. ՔՈՎԱԼԷՎՍԿԻԻ

Օգոստոսի 13 ին՝ մինչ մենք բարձրացել էինք ՚ի Մեծն Մասիս, Պ. Քովալէվսկի՝ մեր ճանապարհորդութեան երկրորդ կարգագրիչն՝ գնացել էր ՚ի Փոքրն Մասիս գագաթն ելնելու և մեզի նման օդաբանական դիտողութիւններ ընելու համար: Կը փափագէր դարձեալ լուսատպել հեռուէն Մեծ Մասեաց գագաթը՝ ճիշդ մեր հոն հասած վայրիկներն:

Փոքր Մասիս՝ Թէպէտ շատ ցած է բաղձատուութեամբ իր մերձաւոր ահա գին հսկային, սակայն իր զառիվերներուն ուղղութեան համար՝ որք կը հասնին մինչև ց⁴⁰⁰, և հրարդխային սահուն և լարծուն աւազոց և կոյտերուն պատճառաւ գծաւորելանելի է:

Տաւներեք անձինք առաւօտեան ժամը 10ին մեկնելով ՚ի Սարգար Բուլակէ, միայն երկու հոգի Պ. Քովալէվսկի և Ս. Դուգլա խազախն կրցան ծամանել ՚ի գագաթն և $\frac{1}{3}$ ժամուն յետ միջօրէին, մինչդեռ անոնց ուրիշ ընկերակիցքն կիսուղի հարկադրեցան հրաժարիլ այս փորձէն:

Փոքր Մասեաց գագաթն բաւական ընդարձակութիւն ունի, ուր 50-100